ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
19 մարտի 2021 թվականի N 18

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ «ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐ ՀԱՆՈՒՆ ԿԼԻՄԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆՆ ՈՒ «ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ» ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻԱՆԱԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի ԹԻՎ 31-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ Վանաձոր համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Վանաձոր համայնքին միանալու Եվրոպական հանձնաժողովի «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությանը, ստորագրելու դաշնագիրը և աջակցելու «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի» (ԿԷԶԳԾ) մշակմանն ու իրականացմանը:

2. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի 2017 թվականի մայիսի 30-ի «Վանաձոր քաղաքի կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 31-Ա որոշումը:

ԿՈՂՄ (18)		ԴԵՄ(0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
Մ.Ասլանյան	Ա.Փելեշյան	---	---
Գ.Քալանթարյան	Կ.Դավթյան		
Ա.Գրիգորյան	Ա.Խաչատրյան		
Վ.Դոխոյան	Ս.Աղաբեկյան		
Ա.Սարգսյան	Ա.Լոքյան		
Ա.Ափինյան	Մ.Ապերյան		
Հ.Մովսիսյան	Հ.Ղամբարյան		
Մ.Հովհաննիսյան	Ս.Մելքոնյան		
Վ.Ավագյան	Ս.Ղամբարյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021 թ. մարտ 19
ք.Վանաձոր